*Հեղինե Հախվերդյան*[1]

# ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Էկոլոգիական ապահովագրությունը, լինելով շրջակա միջավայրի պահպանության տնտեսական գործիքշարի կարևորագույն բաղադրիչներից, սերտորեն առնչվում է ինչպես էկոլոգիական իրավունքի ինստիտուտներին, այնպես էլ ապահովագրության ինստիտուտին: Իսկ վերջինս, գտնվելով քաղաքացիական իրավունքի տիրույթում, կապված է նաև ֆինանսական իրավունքի հետ: Հետևաբար, էկոլոգիական ապահովագրության ինստիտուտի համակողմանի ուսումնասիրությունը ենթադրում է միջճյուղային իրավական վերլուծություն:

**Էկոլոգիական ապահովագրությունը** էկոլոգիական ռիսկեր ունեցող սուբյեկտների քաղաքացիաիրավական (գույքային) պատասխանատվության ապահովագրությունն է, որը կարող է առաջանալ տվյալ գործունեությամբ պայմանավորված շրջակա միջավայրի վթարային կամ աստիճանական աղտոտման հետևանքով:

Ապահովագրության և ապահովագրական գործունեության իրավական կարգավորման հիմնական նպատակներն են ապահովադիրների, ապահովագրված անձանց և շահառուների իրավունքների պաշտպանությունը, ապահովագրական համակարգի կայուն զարգացման, հուսալիության և բնականոն գործունեության ապահովումն ու ապահովագրական գործունեություն իրականացնողների միջև ազատ տնտեսական մրցակցության համար հավասար պայմանների ստեղծումը:

Նշված նպատակներից ելնելով՝ ապահովագրության ցանկացած նոր դասի՝ այդ թվում նաև էկոլոգիական ապահովագրության ներդրումը ենթադրում է որոշակի ճշգրտումներ և լրացումներ գործող իրավակարգավորման շրջանակներում, որոնք, համարժեքորեն հաշվի

[1] ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ ի. գ. թ., պրոֆեսոր Ա. Բ. Իսկոյան:

առնելով էկոլոգիական ապահովագրության առանձնահատկությունները, կապահովեն դրա արդյունավետ գործառումը:

Իհարկե, էկոլոգիական ապահովագրության ներդրման մասով բոլոր իրավական խնդիրների քննարկումը մեկ հոդվածի շրջանակներում իրատեսական չէ, ուստի դիտարկվում են միայն որոշ հիմնական ինստիտուտներ:

Էկոլոգիական ապահովագրությունը, վերաբաշխելով ռիսկերը ապահովադրի, ապահովագրողի և վերաապահովագրողի միջև, ապահովում է իրավաբանական և ֆիզիկական անձանց տնտեսական շահերի պաշտպանությունը, թույլ է տալիս բարձրացնել տնտեսվարման արդյունավետությունը: Տնտեսագիտական գրականությունում առավել հաճախ շեշտվում է այն ճշմարտությունը, որ տնտեսական շահերից վեր կանգնած է հասարակության ինքնապահպանման պահանջը, որը մեծապես պայմանավորված է շրջակա միջավայրի որակով, իսկ հասարակական շահերի և տնտեսության զարգացման բնականոն հարաբերակցությունն ամփոփվում է *կայուն զարգացման* հայեցակարգում, որի բաղադրիչներից մեկն էլ էկոլոգիական ապահովագրությունն է: Էկոլոգիական ապահովագրությունը նպաստում է տնտեսական շահերի «համաձայնեցմանը» հասարակության ինքնապահպանման պահանջի հետ, էկոլոգիական գործոնները տնտեսական գործունեության ընթացքում հաշվի առնելուն և շրջակա միջավայրի աղտոտման ռիսկերը նվազեցնելուն[2]: Հետևաբար, էկոլոգիական ապահովագրության իրավական կարգավորումը պահանջում է խիստ հետևողական մոտեցում՝ ապահովագրության ոլորտի, ինչպես նաև հարակից օրենսդրության հետ ներդաշնակ համակարգային կապեր ապահովելու առումով:

Ինչպես ցույց է տվել ԵՄ անդամ պետությունների փորձը, էկոլոգիական ապահովագրությունը բավականին զգայուն է պետական կարգավորման նկատմամբ: Թեև Էկոլոգիական ապահովագրությունը ենթադրում է բազմապիսի շահերի փոխազդեցություն, սակայն որոշիչ նշանակություն ունի պետության տնտեսական շահը: Էկոլոգիական ապահովագրության դեպքում պետության հիմնական շահը կապված է վնասների հատուցման հետ, որոնք անխուսափելիորեն

[2] Տե՛ս **Сухов С.М.,** Автореферат диссертации д. э. н. Экономические интересы субъектов экологического страхования. - М.: 2003, էջ 12-13:

առաջանում են տնտեսության որոշ ճյուղերի՝ շրջակա միջավայրի վրա անբարենպաստ ազդեցության հետևանքով: Հետևաբար, էկոլոգիական անվտանգության ոլորտում պետական քաղաքականությունը պետք է ուղղված լինի նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ տնտեսահիրավական նախադրյալների ապահովմանը[3]: Տնտեսական զարգացման և շրջակա միջավայրի պահպանության զուգակցման առնչությամբ պրոֆեսոր Ա. Բ. Իսկոյանը նշում է. «էկոլոգիական խնդիրներն ածանցյալ են տնտեսական զարգացումից, լուծվում են տնտեսական միջոցներով, տնտեսությունն ստանում է էկոլոգիական կողմնորոշում, իսկ շրջակա միջավայրի պահպանությունն ունի տնտեսագիտական բնութագրիչներ»[4]:

ՀՀ-ում ապահովագրության և ապահովագրական գործունեության հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով[5], «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով[6], պարտադիր ապահովագրության մասին առանձին օրենքներով, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:

***Ապահովագրության ձևերը:*** Ապահովագրության ինստիտուտի զարգացման արդյունքում այսօր շատ երկրներում, այդ թվում և Հայաստանում, կիրառվում է երկու հիմնական ձև՝ *կամավոր և պարտադիր:* «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պարտադիր ապահովագրության իրականացման դեպքերը, կարգը և պայմանները սահմանվում են օրենքով»: Այսինքն՝ պարտադիր էկոլոգիական ապահովագրության ներդրման համար անհրաժեշտ է համապատասխան օրենքի ընդունում, ինչպես, օրինակ, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվութ-

---

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 16:

[4] Տե՛ս **Искоян А. Б.,** Основы развития национальной экологической политики как одно из важных условий совершенствования экологического законодательства // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու նվիրված ՀՀ անկախության հռչակման 20-ամյակին, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 328:

[5] Ընդունվել է 05.05.1998 թ., ուժի մեջ է մտել 01.01.1999 թ., ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

[6] Ընդունվել է 09.04.2007 թ., ուժի մեջ է մտել 30.09.2007 թ., ՀՀՊՏ 2007.05.30/27(551) Հոդ. 647:

յան պարտադիր ապահավոգրության մասին» ՀՀ օրենքի[7] ընդունմամբ սկսեց գործել ապահովագրության նշված դասը:

Պարտադիր էկոլոգիական ապահովագրության դեպքում արտահայտված են հետևյալ հատկանիշները: **Նախ,** քանի որ գործունեության որոշ տեսակների դեպքում շրջակա միջավայրի աղտոտման ռիսկը բավականին բարձր է, համապատասխանաբար մեծ է նաև վերականգնողական աշխատանքների արժեքը, իսկ պարտադիր ապահովագրության դեպքում երաշխավորվում է որոշակի միջոցների առկայությունը ինչպես անհրաժեշտ աշխատանքների կատարման, այնպես էլ վնասների հատուցման համար: **Երկրորդ,** ապահովագրության դեպքում անվտանգության առավել խիստ պահանջներ են ներկայացվում, ինչի արդյունքում ուժեղանում է վերահսկողությունը գործունեության առանձին վտանգավոր տեսակների նկատմամբ: Եվ, **վերջապես,** ապահովագրությունն անուղղակիորեն նպաստում է նաև գործունեության որոշակի տեսակների նկատմամբ վստահության մթնոլորտի ամրապնդմանը[8]:

Ա. Գ. Նեցվետանի և Մ. Ս. Ժիլկինայի կարծիքով՝ նախկին ԽՍՀՄ պետություններում էկոլոգիական ապահովագրության զարգացմանը խոչընդոտում են տնտեսական զարգացման ցածր մակարդակը, ինչպես նաև առավել վտանգի աղբյուր հանդիսացող արտադրական օբյեկտներ շահագործող սուբյեկտների անբավարար ֆինանսական միջոցները: Ինչպես արդարացիորեն գտնում են նշված հեղինակները, պոտենցիալ ապահովադիրների ցածր վճարունակության պայմաններում շատ թե քիչ կայուն կարող է զարգանալ միայն **պարտադիր** էկոլոգիական ապահովագրությունը, քանի որ կամավոր ապահովագրության դեպքում ապահովագրական վճարների համար պարզապես միջոցներ չեն գտնվի[9]: Բացի այդ, սուղ ֆինանսական միջոցներ ունեցող ընկերությունների հիմնական միջոցներն առավել մաշված են, տեխնոլոգիական գործընթացներն էկոլոգիական տեսանկյունից անվտանգ չեն, հետևաբար՝ բարձր է ապահովագրական դեպքերի

---

[7] Ընդունվել է 18.05.2010 թ., ուժի մեջ է մտել 26.06.2010 թ., ՀՀՊՏ 2010.06.16/26(760) Հոդ. 644:

[8] Տե՛ս **Абалкина И. Л.,** Страхование экологических рисков. - М.: ИНФРА-М, 1998, էջ 13:

[9] Տե՛ս **Нецветаев А. Г., Жилкина М. С.,** Экологическое страхование - надежный инструмент экономико-правового механизма охраны окружающей среды // Юридический мир. 1999, № 9, էջ 14-15:

ռիսկը, ինչը հանգեցնում է նման ընկերությունների համար ապահովագրական ծառայության ավելի բարձր արժեքի: Ստացվում է մի իրավիճակ, երբ էկոլոգիական ռիսկերի ապահովագրության ավելի լուրջ կարիք ունեցող ընկերությունները չեն օգտվում ապահովագրական ծառայություններից: Նշվածին պետք է հավելել նաև տնտեսության մենաշնորհացվածության բարձր մակարդակը, ինչը լրջորեն խոչընդոտում է ապահովագրության կամավոր ձևի զարգացմանը:

Վերոգրյալը որևէ պարագայում չի նսեմացնում կամավոր էկոլոգիական ապահովագրության նշանակությունը, սակայն այն պետք է լինի որպես օժանդակող և լրացնող հնարավորություն[10]:

***Պետության մասնակցությունն ապահովագրական ընկերություններում:*** ՀՀ գործող օրենսդրությամբ ապահովագրական ընկերություններում պետության մասնակցության հնարավորությունները խիստ սահմանափակ են: «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունը, օտարերկրյա պետությունները, Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա պետության համայնքներն Ընկերության մասնակից կարող են լինել բացառապես օրենքով սահմանված դեպքերում և կարգով»: Նույն հոդվածի 3-րդ մասը նախատեսում է պետության հնարավորությունը հիմնադրելու բացառապես արտահանման ապահովագրությամբ զբաղվող ապահովագրական ընկերություն և (կամ) լինել այդ ընկերության մասնակից: Փաստորեն, ապահովագրության մյուս տեսակներն իրականացվում են միայն ապահովագրական ընկերությունների կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցությամբ:

Եթե կամավոր իրականացվող ապահովագրության դեպքում պետության մասնակցությունը սահմանափակող մոտեցումն ընդունելի է, ապա պարտադիր ապահովագրության դեպքում, երբ, որպես կանոն, ապահովագրության օբյեկտը սերտորեն առնչվում է հանրային շահերին, գտնում ենք, որ պետական մասնակցությունն ապահովագրական ընկերություններում առավել քան սկզբունքային նշանա-

---

[10] ՀՀ-ում պարտադիր էկոլոգիական ապահովագրության ներդրման նպատակահարմարության վերաբերյալ տե՛ս **Հախվերդյան Հ. Ս.,** Պարտադիր էկոլոգիական ապահովագրության համակարգ ՀՀ-ում. իրավական կարգավորման որոշ հարցեր // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2013 թ. Նստաշրջանի նյութերի ժողովածու, Եր.: ԵՊՀ հրատ., 2014, էջ 111-123:

կություն ունի: Ընդ որում, այդ մասնակցության չափը պետք է հնարավորություն տա կանխորոշելու ընկերության որոշումները:

Այս առնչությամբ Ն.Ն. Կոսարենկոն ապահովագրության ոլորտում հանրային շահերի պաշտպանությանը նվիրված մենագրությունում պետության ուղղակի մասնակցության անհրաժեշտությունը պարտադիր ապահովագրություն իրականացնող ընկերություններում հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

1) բարձր մակարդակի ապահովագրական երաշխիքներ,

2) ընկերության ներդրումների առաջնահերթությունների որոշում և համապատասխանաբար միջոցների տեղաբաշխում,

3) նպատակային պահուստների և ֆոնդերի ստեղծում, որոնք հնարավորություն կտան ֆինանսավորել կանխարգելիչ և այլ միջոցառումների իրականացումը՝ ըստ անհրաժեշտության[11]:

Նշված հիմնավորումները լիովին կիրառելի են նաև պարտադիր էկոլոգիական ապահովագրության պարագայում:

Վերոգրյալը տրամաբանորեն հանգեցնում է միայն պետական կամ պետական և մասնավոր կապիտալի միավորմամբ ապահովագրական ընկերությունների ստեղծման գաղափարին: Նման մոտեցում որդեգրելու դեպքում, բնականաբար, անհրաժեշտ կլինի «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածում նախատեսել համապատասխան վերապահում նաև էկոլոգիական ապահովագրության մասով, իսկ օրենքի 7-րդ հոդվածը լրացնել ապահովագրության համապատասխան ենթադասով:

***Ապահովագրական գործունեության լիցենզավորումը:*** «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի[12] և «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ապահովագրական գործունեությունը համարվում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ: Իսկ ապահովագրական գործունեության լիցենզավորումը ապահովագրական շուկայի կարգավորման հիմնական գործիքներից է, որի նպատակն է ստուգել և հավաստել ապահովագրական ընկերության «պատրաստվածությունն» իրականացնելու մեկ կամ մի քանի դասի ապահովագրական գործունեություն: «Ապա-

---

[11] Ավելի մանրամասն տե՛ս **Косаренко Н. Н.,** Правовое обеспечение публичных интересов в сфере страхования. Монография. - М.: Волтерс Клувер, 2010, էջ 133-140:

[12] Ընդունվել է 30.05.2001 թ., ուժի մեջ է մտել 08.08.2001 թ., ՀՀՊՏ 2001.08.08/26(158) Հոդ. 581:

հովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասը ապահովագրական գործունեության լիցենզիան բնորոշում է որպես Կենտրոնական բանկի կողմից տրվող ապահովագրական գործունեություն իրականացնելու թույլտվությունը հավաստող փաստաթուղթ, որը տրամադրվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: Ընդ որում, ապահովագրության յուրաքանչյուր դասի շրջանակներում համապատասխան ենթադասերով ապահովագրություն իրականացնելու համար պահանջվում է առանձին լիցենզիա: Ապահովագրական ընկերությունների լիցենզավորման ընթացակարգը սահմանվում է «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ը հաստատելու մասին» ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ[13]:

Ապահովագրական ընկերության գրանցման և լիցենզավորման համար անհրաժեշտ փաստթղթերի ցանկը սահմանված է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածում, իսկ ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի վերոգրյալ որոշմամբ սահմանվում են նշված փաստաթղթերի բովանդակությանը ներկայացվող պահանջները: Գրանցման և լիցենզավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկն, ըստ էության, կախված ապահովագրության դասից, ըստ էության չի տարբերվում: Բովանդակային առանձնահատկությունները, պայմանավորված ապահովագրության դասով և ենթադասով, արտացոլվում են **ընկերության գործարար ծրագրում**, որին էլ կանդրադառնանք էկոլոգիական ապահովագրության տեսանկյունից:

«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ը հաստատելու մասին» ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշման համաձայն՝ ընկերության գործարար ծրագիրն ամբողջական փաստաթուղթ է, որի խնդիրներն են.

---

[13] Ընդունվել է 30.10.2007 թ., ուժի մեջ է մտել 27.12.2007 թ., ՀՀԳՏ 2007.12.27/33(273) Հոդ. 429:

1. ծառայել շահագրգիռ անձանց (մասնակիցներ, ներդրողներ, ապահովագրական ընկերության ղեկավարներ և այլ շահագրգիռ անձինք)՝ որպես մի ամփոփ փաստաթուղթ, որով կարող են գնահատվել ապահովագրական ընկերության գործունեության բնույթն ու առանձնահատկությունները,

2. օգնել ապահովագրական ընկերության ղեկավարներին՝ պարզաբանել, հստակեցնել և հետազոտել ապահովագրական ընկերության գործունեության զարգացման հնարավոր հեռանկարները և ծառայել ապահովագրական ընկերության ղեկավարներին՝ որպես հիմք, որով կարող են գնահատվել ապահովագրական ընկերության փաստացի գործունեության արդյունքները և արդյունավետությունը,

3. օգնել ապահովագրական ընկերությանը հետևողականորեն իրականացնել նախանշված նպատակները և խնդիրները պլանավորվող ժամանակահատվածում,

4. Կենտրոնական բանկին ներկայացնել ապահովագրական ընկերության կողմից պլանավորված գործունեությունը, որը Կենտրոնական բանկը կարող է օգտագործել ապահովագրական ընկերության ընտրած ռազմավարությունը, ռիսկերի կառավարման մակարդակը գնահատելու համար:

Նշված խնդիրներին համապատասխան ապահովագրական ընկերության գործարար ծրագրի բովանդակությունն ընդգրկում է՝ ապահովագրական ընկերության նկարագիրը, առաքելությունը, նպատակները և խնդիրները, գործունեության սկզբունքները և հիմնական ուղղությունները, ընկերության ուժեղ և թույլ կողմերի վերլուծությունը, արտաքին միջավայրի կանխատեսումը և հնարավորությունների ու սպառնալիքների գնահատումը և ընկերության հեռանկարային զարգացման պլանը:

Գործարար ծրագրի բովանդակությունը վկայում է վերահսկող մարմնի կողմից նոր ստեղծվող ապահովագրական ընկերության, նրա պրոֆեսիոնալիզմի, վերլուծական և կանխատեսման հնարավորությունների նկատմամբ հատուկ պահանջների մասին[14]:

Թեև գործարար ծրագրի կառուցվածքը ևս միասնական է բոլոր ընկերությունների համար, սակայն առանձին բաժինների շարադ-

---

[14] Տե՛ս **Журавлев Ю. М., Секерж И. Г.,** Страхование и перестрахование (теория и практика). - М.: «Аникл», 1993, էջ 27-28:

բանքին ներկայացվող պահանջները թույլ են տալիս արտացոլել ապահովագրության յուրաքանչյուր դասի առանձնահատկությունները: Այդուհանդերձ, գնահատելով գործարար ծրագրի կառուցվածքը էկոլոգիական ապահովագրության բնութագրիչների համատեքստում՝ հանգում ենք այն եզրակացության, որ փաստաթուղթը պետք է լրացվի համապատասխան նոր բաժիններով, որտեղ կարտացոլվեն տեղեկություններ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում պետական կառավարման լիազորված մարմինների հետ ընկերության համագործակցության բնույթի և ուղղությունների, անհրաժեշտ բնապահպանական միջոցառումների ֆինանսավորման, էկոլոգիական աուդիտի անցկացման և տվյալների գնահատման, ինչպես նաև կադրերի մասնագիտական որակավորման բարձրացման վերաբերյալ:

Կարևոր նշանակություն ունի նաև ընկերության գործարար ծրագրի ժամկետը գործունեության կայունությունը գնահատելու տեսնակյունից: Ընդհանուր կանոնի համաձայն՝ գործարար ծրագիրը կազմվում է երեք տարի ժամկետով, նշված ժամկետը լրանալուց հետո ներկայացվում է նոր ծրագիր միևնույն ժամկետով: Եթե այս մոտեցումը ընդունելի է ապահովագրության գործող տեսակների և դասերի դեպքում, ապա էկոլոգիական ապահովագրության պարագայում, հաշվի առնելով երկարաժամկետ ռիսկերի կառավարման անհրաժեշտությունը, հիմնավորված ենք համարում գործարար ծրագիրը կազմել տասը տարի ժամկետով՝ սահմանելով նաև յուրաքանչյուր տարի ըստ անհրաժեշտության փոփոխություններ ու լրացումներ կատարելու պայման:

***Հիմնական տնտեսական նորմատիվները:*** «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում են հետևյալ տնտեսական նորմատիվները.

1. կանոնադրական և ընդհանուր կապիտալների նվազագույն չափերի նորմատիվներ,
2. վճարունակության նորմատիվներ,
3. կապիտալի համարժեքության նորմատիվներ,
4. իրացվելիության նորմատիվներ,
5. տեխնիկական պահուստներին համարժեք բոլոր և առանձին վերցված ակտիվների նորմատիվներ,

6. ստանձնած ապահովագրական մեկ ռիսկի առավելագույն չափի նորմատիվ,

7. ստանձնած ապահովագրական խոշոր ռիսկերի առավելագույն չափի նորմատիվ,

8. մեկ փոխառուի, խոշոր փախառուների գծով ռիսկի առավելագույն չափը,

9. ընկերության հետ փոխկապակցված անձանց, անձի գծով ռիսկի առավելագույն չափը,

10. արտարժույթի տնօրինման նորմատիվը:

ՌԴ-ում էկոլոգիական ապահովագրության համակարգի ներդրմանը նախորդած ուսումնասիրությունների շրջանակներում ձևավորվել են ընկերությունների տնտեսական նորմատիվների վերաբերյալ որոշակի մոտեցումներ, որոնք հիմնված են էկոլոգիական ռիսկերի առանձնահատկությունների վրա և կարող են կիրառելի լինել նաև մեր երկրում: Մասնավորապես՝ ընկերության պահուստային ֆոնդը գործունեության առաջին տարվա համար չպետք է պակաս լինի կանոնադրական կապիտալի 12%-ից, մեկ էկոլոգիական ռիսկի համար ստանձնած ապահովագրության առավելագույն չափը չի կարող գերազանցել ընկերության սեփական միջոցների 10%-ը, իսկ հինգ առավել խոշոր ռիսկերի մասով ապահովագրության առավելագույն չափը՝ ընկերության սեփական միջոցների կրկնակին: Վերջին չափանիշը գերազանցելու դեպքում պարտադիր կնքվում է վերաապահովագրության պայմանագիր: Էկոլոգիական ապահովագրության մասով ստացված ընկերության շահույթի 30%-ն ուղղվում է կանխարգելիչ բնապահպանական միջոցառումների իրականացմանը[15]: Նշված նորմատիվների համեմատությունը ՀՀ կենտրոնական բանկի՝ ապահովագրության այլ տեսակների և դասերի համար սահմանած նորմատիվների հետ ցույց է տալիս, որ էկոլոգիական ապահովագրություն իրականացնող ընկերությունների գործունեության ֆինանսատնտեսական ցուցանիշներին ներկայացվող պահանջներն ավելի բարձր են:

ԵՄ-ում գործող մոտեցումը ևս հետևում է միևնույն տրամաբանությանը, սակայն տնտեսական նորմատիվները բաժանվում են երկու հիմնական մասի՝ նպատակային ակտիվներ, որոնք օգտագործ-

---

[15] Տե՛ս Экологическое страхование в России (официальные документы, научные разработки, экспериментальные оценки). Под ред. **А. А. Аверченкова, В. Л. Грошева, Г. А. Моткина.** М.: 1995, էջ 37-38:

վելու են ստանձնած ապահովագրական ռիսկերը ծածկելու համար, և անվտանգության պահուստ, որի նվազագույն շեմը իջնելու դեպքում ապահովագրված էկոլոգիական ռիսկերի կառավարումը վտանգվում է[16]: Այսինքն՝ անվտանգության պահուստը բոլոր դեպքերում փոքր է նպատակային ակտիվներից, սակայն ի տարբերություն նպատակային ակտիվների՝ անվտանգության պահուստի չափը ըստ ապահովագրված ռիսկերի չի կարող փոփոխվել:

***Ներդրումային գործունեությունը:*** Ինչպես իրավացիորեն նշում են Կ. Ի. Պիլովը և Լ. Ն. Կլոչենկոն, ապահովագրական ընկերությունը հիմնադրվում է ապահովագրական գործունեություն իրականացնելու նպատակով, որը նրա համար անմիջական և բացառիկ գործունեություն է, այլ կերպ ասած՝ գործունեության միակ տեսակը[17]: Նշված սահմանափակումը, սակայն, վերաբերում է ապահովագրական ընկերության հիմնական գործունեությանը. ընկերությունը ծառայությունների մատուցման ոլորտում այլ գործունեություն իրականացնել չի կարող: «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 79-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Ընկերությունները կարող են կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է իրենց՝ սույն օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով թույլատրված գործունեությունն իրականացնելու համար: Ընկերությունները չեն կարող իրականացնել արտադրական, առևտրային, բանկային ու վարկային կազմակերպության գործունություն, …:»: Այդուհանդերձ, ապահովագրական ընկերությունների՝ օրենքով ամրագրված սահմանափակ իրավունակությունը չի բացառում նրանց կողմից շահույթի ստացումը սեփական ակտիվներն իրացվելի կազմակերպություններում ներդնելու ճանապարհով[18]: Ընդ որում, էկոլոգիական ապահովագրության պարագայում էականորեն ընդլայնվում են ներդրումային գործունեության հեռանկարները, քանի որ ներգրավվում են զգալի միջոցներ, իսկ ապահովագրական դեպքերի վրա

---

[16] Տե՛ս CEB Working Paper N10/041 August, 2010, էջեր 12-13:

[17] Տե՛ս **Клоченко Л. Н., Пылов К. И.,** Основы страхового права: Учебное пособие. Ярославль, 2002, էջ 52:

[18] Տե՛ս **Абрамов В. Ю.,** Страхование: теория и практика. М.: "Волтерс Клувер", 2007, էջ 28:

հասնելու ցածր հավանականությունը և հաճախականությունը թույլ են տալիս արդյունավետ տեղաբաշխել դրանք[19]:

Հաշվի առնելով շրջակա միջավայրի պահպանության առաջնահերթությունը՝ առաջարկում ենք էկոլոգիական ապահովագրության վերաբերյալ օրենքում որոշակի պահանջներ ներկայացնել նշված գործունեությունից ստացված շահույթի որաշկի մասը բնապահպանական ծառայություններ մատուցող ընկերություններում ներդնելու մասին: Այս մոտեցումն առավել իրատեսական է դառնում պետության մասնակցությամբ ապահովագրական ընկերությունների կողմից էկոլոգիական ապահովագրություն իրականացնելու պարագայում:

***Ընկերության հաշվետվությունները:*** «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 85-րդ հոդվածը սահմանում է, որ ապահովագրական ընկերությունները ֆինանսական և այլ հաշվետվություններ են ներկայացնում ՀՀ կենտրոնական բանկ: Այս մոտեցումը բխում է Կենտրոնական բանկի՝ ոլորտում վերահսկողություն իրականացնող մարմին լինելու հանգամանքից:

Չհակադրվելով ընդհանուր կանոնին, և, միաժամանակ, հաշվի առնելով այն, որ շրջակա միջավայրի տեսանկյունից ռիսկային գործունեություն իրականացնող ընկերությունների նկատմամբ վերահսկողություն է իրականացնում նաև ՀՀ բնապահպանության նախարարությունը, գտնում ենք, որ արդարացված կլինի ապահովագրական ընկերությունների կողմից ամփոփ հաշվետվությունների ներկայացումը ՀՀ բնապահպանության նախարարությանը: Իհարկե, այս դեպքում հաշվետվությունները պետք է սահմանափակվեն ապահովագրված ռիսկերի էկոլոգիական պարամետրերի վերաբերյալ տեղեկատվությամբ, ինչպես նաև պետք է հաշվի առնվեն ապահովագրական գաղտնիքի պահպանության վերաբերյալ կանոնները:

Ապահովագրական ընկերությունների և ՀՀ բնապահպանության նախարարության համագործակցությունը կարող է արդյունավետ դառնալ նախարարությունից ընկերություններին տրամադրվող էկոլոգիական տեղեկատվության համակարգի մշակման շնորհիվ, որը ռիսկերի կառավարման տեսանկյունից առանցքային նշանակություն

---

[19] Տե՛ս **Нецветаев А. Г., Жилкина М. С.,** Экологическое страхование - надежный инструмент экономико-правового механизма охраны окружающей среды // Юридический мир, № 9, 1999, էջ 12:

կարող է ունենալ և որոշ չափով հարթել էկոլոգիական ապահովագրությանը բնորոշ տեղեկատվական ասիմետրիան:

Այդպիսի տեղեկատվության կազմում կարող են ընդգրկվել բնական ռեսուրսների օգտագործման ծավալները, տրամադրված թույլտվությունները, վերահսկողության արդյունքում հայտնաբերված վտանգավոր նյութերի արտանետումների և արտահոսքերի ծավալները, դրանց կարգավորման հնարավորությունները, հսկող սարքերի տեխնիկական վիճակը, մոնիթորինգի տվյալները և այլն[20]: Կարևոր է հիշատակել նաև ընկերությունների կողմից սեփական բնապահպանական ռիսկերի գնահատման արդյունքները: Նման գնահատում ՀՀ-ում իրականացվում է 2013 թ.՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության կողմից ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման[21]:

***Ապահովագրական գաղտնիք:*** «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում *ապահովագրական գաղտնիքը* բնորոշվում է որպես ապահովագրական գործունեության ընթացքում ապահովադրի, ապահովագրված անձի կամ շահառուի վերաբերյալ ապահովագրողին, վերաապահովագրողին, ապահովագրական միջնորդություն իրականցնող անձին հայտնի դարձած ապահովադրի, ապահովագրված անձի կամ շահառուի առևտրային գաղտնիքը կամ այլ տեղեկություն, որն ապահովադիրը կամ ապահովագրված անձը մտադիր են եղել գաղտնի պահել, և Ընկերությունը, վերաապահովագրական ընկերությունը կամ ապահովագրական միջնորդը տեղյակ է կամ պարտավոր էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ: Նշված սահմանումից ուղղակիորեն բխում է, որ ապահովագրական գաղտնիք համարվող տեղեկատվության ցանկը համաձայնեցվում է ապահովադրի հետ կնքված պայմանագրով: Բնականաբար, *ապահովագրական գաղտնիք և առևտրային գաղտ-*

---

[20] Տե՛ս **Бирюков В. Л., Перцев С. Ф., Гаенко В. П.,** Правовое становление экологического страхования в Российской Федерации // Экономика природопользования. Том 1. - М.: 2007, էջ 156-157:

[21] Ընդունվել է 22.11.2012 թ., ուժի մեջ է մտել 31.12.2012 թ., ՀՀՊՏ 2012.12.21/62(936) Հոդ. 1352:

*նիք* հասկացությունները միմյանց բացառել չեն կարող, և ապահովագրության հարաբերությունների մեջ մտնելուց հետո ապահովագրական ընկերությանը հայտնի դարձած առևտրային գաղտնիքի նկատմամբ կտարածվեն նաև ապահովագրական գաղտնիքի պահպանության վերաբերյալ կանոնները:

Միաժամանակ, հարկ է նշել, որ պարտադիր էկոլոգիական ապահովագրության դեպքում մի շարք տվյալներ ինքնըստինքյան չեն կարող համարվել ապահովագրական գաղտնիք, մասնավորապես՝ ապահովադրի անվանումը, գործունեության տեսակը, ապահովագրական պայմանագրի ժամկետը և այլն, այսինքն՝ այն տեղեկատվությունը, որը պարտադիր էկոլոգիական ապահովագրության մասին օրենքով սահմանվելու է որպես իմպերատիվ պահանջ:

Մյուս կողմից, սկզբունքային նշանակություն ունի օրենքով սահմանել վերապահում այն մասին, թե էկոլոգիական տեղեկատվության որ տեսակները չեն կարող դիտարկվել որպես ապահովագրական գաղտնիք: Այդ տեղեկատվության կազմում պետք է ընդգրկվեն ապահովադրի գործունեության այն էկոլոգիական պարամետրերը, որոնց վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունն ամրագրված է «Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» ՄԱԿ-ի ԵՏՀ կոնվենցիայով[22] (1998 թ., Օրհուս):

***Եզրակացություն***

Հոդվածի շրջանակներում քննարկված հարցերը վերաբերում են պարտադիր էկոլոգիական ապահովագրության ինստիտուտի ներդրման համատեքստում ապահովագրության և ապահովագրական գործունեության ոլորտը կարգավորող օրենսդրության որոշ ինստիտուտների անհրաժեշտ փոփոխություններին և լրացումներին: Առանձին ենթավերնագրերի ներքո ամփոփված առաջարկները կարող են օգտակար լինել ապագայում «Պարտադիր էկոլոգիական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի հայեցակարգի մշակման համար:

[22] Ընդունվել է 25.06.1998 թ., ուժի մեջ է մտել 30.10.2001 թ., ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/4(12):

*Егине Ахвердян*
*Аспирант кафедры гражданского процесса ЕГУ*

## ОСНОВНЫЕ ПОЛОЖЕНИЯ ЗАКОНОДАТЕЛЬСТВА РА В СФЕРЕ СТРАХОВАНИЯ В КОНТЕКСТЕ ВНЕДРЕНИЯ ИНСТИТУТА ОБЯЗАТЕЛЬНОГО ЭКОЛОГИЧЕСКОГО СТРАХОВАНИЯ

Статья посвящена исследованию некоторых институтов страхового законодательства РА в контексте принятия в будущем законодательства об обязательном экологическом страховании. В этой связи обосновываются соответствующие направления развития национального законодательства относительно участия государства в уставном капитале страховых компаний, занимающихся страхованием экологических рисков, специфических требований лицензирования, особенностей основных экономических нормативов, инвестиционной деятельности компаний и страховой тайны. Правовой анализ указанных вопросов проводится с учетом роли Министерства охраны природы РА, и обосновывается точка зрения о наделении министерства соответствующими правомочиями в сферах лицензирования, отчетности и обмена информацией. В результате исследования предлагаются изменения и дополнения в Закон РА «О страховании и страховой деятельности» на основании особенностей обязательного экологического страхования и с учетом существующих в Армении систем экологического управления и страхования.

**Heghine Hakhverdyan**
*PhD student at the YSU Chair of Civil Procedure*

## THE MAIN PROVISIONS OF THE RA INSURANCE LEGISLATION IN THE CONTEXT OF APPLICATION OF MANDATORY ENVIRONMENTAL INSURANCE

The article is devoted to examination of several institutions within RA legislation in the insurance sphere to the extent of adoption legislation on mandatory environmental insurance. To this end several core directions are substantiated concerning participation of the state in the companies dealing with environmental insurance, specific licensing requirements,

peculiarities applicable to the main economic normatives, investment activities and insurance secret. In line with these issues the role of the Ministry of Nature Protection of RA is scrutinized connected with allocation to it relevant powers in the spheres of licensing, accountability and exchange of information. In the result of the analyses changes are suggested to the Law of RA «On Insurance and Insurance Activities» deriving from peculiarities of the mandatory environmental insurance and based on existing governing system of nature protection and insurance spheres.

**Բանալի բառեր՝** *էկոլոգիական ապահովագրություն, ապահովագրական գործունեության լիցենզիա, տնտեսական նորմատիվներ, ներդրումային գործունեություն, ապահովագրական գաղտնիք:*

**Ключевые слова:** *экологическое страхование, лицензия, экономические нормативы, инвестиционная деятельность, отчетность, страховая тайна.*

**Key words:** *environmental insurance, insurance license, economic normatives, investment activities, accountability, insurance secret.*